

100. ԱՍԾԱՏՈՒՐԸ ՆԱՆ ՎԱՐԹԻՆ

Իլա՛լ ա, չիլա՛լ մին մարթ, մին կնեգյ։ Տահանց խոխա չի իլա՛լ։

Էտ մարթը շատ ա դա՛ռդ ըրալ, ինքյն-ինքյը քնենքյ ըրալ, թա՛. — Բա յըես էսքան հարուստ, ինձ խոխա չօնիմ, վըեր մոնելանըս ետը հարըստոթունիս տրոթուն անե։

Տի շատ ա կենում, խրեգյ ա կենում, մին պառավ կնեգյ կյամ ա, ասըմ. — Գյուդում ը՞ս հինչ կա, քյինա՛ ծակ կարմունջեն քշտեն մին բուրթկա շինիլ տո, եկող-քյնողին հաց տո։ Կյվողը քու հոր ղորմի կտա, աստուծ էլ մեխկը կկյա, քյըեզ մին խոխա կտա։

Էտ մարթը իտի էլ անըմ ա։ Համին էտ վախտեն մին հարս մին տղի նհետ ման ա կյամ, մին խոխա պիրում, նշանածը թողում ա, փախչըմ։ Հարսը հմնչիլան նհետ խոխան յոր ա օնում, տանում կըրմունջեն քշտեն տինում։ Էտ մարթը կյամ ա յոր օնում, տանում տոն, կնդանն ասում, վեր մին խոխա յա քիթա՛լ։ Ըտրա հետե էլ անըմը տնըմ ըն Ասծատուր, Աստուծ տված։

Օխտը առնանը ետը, էտ մարթին կնեգյը մին ախճիգյ, մին տղա յա պիրում, ըխճկանը անըմը տնըմ ըն Վարթի։

Անց ա կըենում մին խիլլա վախտ։ Մին ամեռնը էտ մարթը ասըմ ա ուրա՛ն տըղեն.— Տու նան Վարթին տանը կացեքյ, տանը եշեցեքյ, մունք քյինա՛նք սարը։

Ասծատուրը նան Վարթին մնըմ ըն տանը։ Հա՛ըը, մարը, տղան քյինում ըն սար։ Մին օր Ասծատուրը տո՛ւս ա կյամ տո՛ռնը։

Մին պառավ ա շիհո՛ւմ, ասըմ.— Բա՛լա, գյուդում ը՞ս վըեր

ըտրանք քու հաՀր, քու մարը չըն, էտ տանատ քյըեզ փայ չօնիս, քյըեզ քթաՀլ ըն, տրա հետե անումտ Աստատուր ա։ Քյըեզ փայ կինի են վախտը, վըեր փսակվիս Վարթուն նհետ։

Տղան կյամ ա տոն, պըլացած։

Թայդի յա ընգյնում, Վարթուն ասըմ.—Յըես քյըեզ ուզլական ըմ։

Վարթին պղնձե դուլչան յրա յա անում, տղեն կլոխը ճղում։ Վըեր կյամ ա հորը նան մորը կյալի վախտը, Աստատուրը վազ ա տամ հորը կոշտը, խաՀրաՀր տամ, ասըմ.— Ապեր, շըհըլնեն եկալ ըն Վարթուն պչպչորալ, շիհաՀլ ըմ, Վարթին դուլչան յրա յա ըրալ կըլոխս ճղալ։

ՀաՀրը ղամաՀն տնըմ ա ուրաՀն տղեն ծեռքեն, ասըմ.—Կա՛, քյինա Վարթուն եր կալ, տար մին քյիհրիզի ղրաղե ծկոտե, առնոտ շորերը պեր ինձ նշանց տու։

Տղան տի յա անում, շորերը եր կալած կյամ ա, թա տա հորը, տեսնում ա հորը հոքյին տուս ա կյամ, գարգան օգըմ ա թա մեռնե։

Վարթին վըեր օշը կլոխն ա հվաքում, տրեսնըմ ա՝ տկլոր ա։ Եր ա կենում հըղեն ինգյնում, քյինամ։

Քյինամ ա, քյինամ ցիրեկը կյողլ ա կենում, քըշերը քյընամ, մին օրիշ քյհրիզու յրա, մին լավ բաղու կոշտ, մին ծառա նիհ ինում, կոչ կյամ։ Էտ համին բաղը մին թաքավերի յա ինում։ Թաքավերեն տղան ըրազումը տրեսնըմ ա մին մարթ կյամ ա կուփե-կուփե անըմ, ասըմ՝ «Նշանածըտ էն ա ծեր բաղըմը տկլոր, մին ծեռք շոր տոր, կյենա, եր կալ եք»։ Էտ քշերը իրեք դոնըմ իտի արաղ ա տրեսնըմ էտ տղան։ Ըռութանա եր ա կենում սնդողան մին ծեռք շոր յոր օնում, ծին եր ինում, քյունում բաղը։ Սաղ բաղերը շոռ ա կյամ, քյըհրիզին քըշտավը թա անց կենա, ծին անց չի կրենում։

Էտ ախճիգյն ասըմ ա.— Ա՛յ տղա, ճիրին մաչին շոխկս ըրեվում ա, ծին խըրթնալ ա, խե յրս ծիյին թխում, վախըմ ա անց կրենա։ Տղան վըեր ըսկանում ա, կլխըյեր եշըմ ա, տրեսնըմ մին տկլոր ախճիգյ ծառեն նստած։ Վըեր եշում ա, շափաղը ըշկերեն ա տամ, աշկերը ծկոտում։

Տղան ասըմ ա.— Հի՞նչ միլլաթ ըս, էս քըշերեն էտ ծառեն յրա։

Ախճիգյն ասըմ ա.— Մին ծեռք շոր տոք, կյենամ, ծառան եր կյամ, ասիմ, թա յրես հու վըմ։

Տղան դարյան տամ ա ուրաՀն, էտ ախճիգյը կյենըմ ա, ետնան նաղլ անըմ ընցածը։ Թաքավերեն տղան էտ ըխճկանն ուրաՀն հետե կնեգյ ա յոր օնըմ, տանըմ պալատը, ուրաՀն օթախը։

Համին քշրհանան, ծառանեն կյամ ըն տղեն տոռնը տրեսնան

խե՞ տեղան եր չի կենըմ։ Ախեր տղան ամեն քշրհանա եր ա կացալ նո̈քյարներեն հըղե քըցա̈լ հա̈նդերը, ծիյենը տղվարալ, մհենգյ ֆյըսօր ա տըեռալ, հա̈լա̈մ զո̈ւրթնանըմ չի՛։ Վեզիրը կյամ ա առնեն ծակավըւ տեսնըմ չորս վըեննն ա ըրևում։ Նախանձան նան չկամոթունան ըսկըսըմ ա ո̈ւրա̈ն մեսն օտելը։ Ասըմ ա. «Խե՞ ո̈ւրա̈ն հետե կնեգյ ա ճարալ, ինձ հետե վուչ»։

Վերշը զո̈ւրթնցնըմ ա, տեսնում մին մարալ ախճիգյ պիրած, վեր ըրևեն ասըմ ա. «Տու տո̈ւս մի կյալ, յըես ըմ տո̈ւս կյալու»։ Վեզիրն օզըմ ա, թա տրաքվե։

Շատ ըն ապրում, խրեգյ ըն ապրում, հարսը մին տղա, մին ախճիգյ ա պիրում։ Խոխեքյը տո̈ւս ըն կյամ, թա հայաթըմը հըրըվաննեն խխորցը նհետ խաղ անին, ծառեքը թողըմ չըն։

Էտ հըրըվաննեն խոխան ետ ա տըեռնըմ ասում.— Բալա, էսա իմ պապումց տանը հըսանիքյ ա իննա̈կան, քյըեզ թուղլական չըմ կյաս, թմաշա անի՛ս, է՛, վըեր թողում չըս քյըզնհետ հաղ անիմ։

Խոխեքը վազ տալավ կյամ ըն մորը համ ասըմ, համ էլ ասըմ.

— Մամա, մեր պապումց տոնը վե՞րն ա, հի՞բ ա հըսանեքյ ինելու, վըեր մունք էլ քյինինքյ, թմաշա անինքյ։

Մարը ըսկըսըմ ա լա̈ց ինիլը։ Մարթը կյամ ա, տըեսնում լա̈ց ինիլիս։

Ինքյը-ինքյը քնենքյ ա անում, ասըմ. «Հա̈լբա̈թ հորը տոնը սերտը օզալ ա»։

Եր ա կենում էտ տղան քառասուն ծառա, մին վեզիր տինո̈ւմ կրնդանը նհետ, փայտոննեն լծըմ, խխոցավը հղե տինըմ։ Համ հղե յա տինըմ, համ թափշուր ա̈ւրմ, ասըմ.— Ծո̈րըմը փյտուննեն տո̈ւս չանիք, ամմեն դո̈նըմ դո̈ւզրսը կդինշանաք։

Դե վեզիրն էլ տի մին պենու վա իլա̈լ մաթա՛լ, եր ըն կենում հըղե ինո̈ւմ։

Շատ ըն քյինո̈ւմ, խրեգյ ըն քյինո̈ւմ, վեզիրը պիրըմ ա փյտուննեն մին խոր ծո̈րըմ տո̈ւս օնում, թա դինջանան։

Նո̈քյարնեն հիշքան հա՛յ-հա՛յ ըն անում, վեզիրը ըսկանում չի՛, կղնվըմ ա, թա̈.— Մեծը յըես ըմ, թա̈ տուք։ Տարեքյ ծիյանքը պհեցեքյ։

Նո̈քյարնեն տանում ըն ծիյանքը ըրըծցնըմ, մինը վեզիրին բուսը պահըմ ա…

Վեզիրին մեթկը ծոռ ա ինըմ, խխոցը քունավ ա անըմ, Վարթուն էլ օզըմ ա ծեռք քըցի։

Վարթին համոզվըմ չի, վեզիրը էրկու խուխեն կլո̈խը կտրըմ ա, էլլա չի համոզվում։

Վըեր կյամ ա, թա Վարթուն կլո̈խը կտրե, Վարթին ասըմ ա. — Լա̈վ ա թող քյինամ էն ղոլը, կյամ։

Վեզիրը շատ գյիդա̈ցած մարթ ա ինո̈ւմ։ Պիրում ա վըեննան մին քյա̈նգիր կապում, պեց թողում։ Վարթին քյա̈նդիրը կտրըմ ա, փախչըմ։

Վեզիրը հարայ-հուրայ յա անըմ,—Ծկե՛քյ, հա՜ եկե՛քյ, ղըշըղնեն եկեն յրա տվեն խխոցը կուտուրեցեն, Վարթուն տարեն...

Նո̈քյարներան վեչ մինը հվատում չի։

Էն բուսը պահող նո̈քյարն ասըմ ա.— Յըես տըեսալ ըմ հու վա խխոցը մորթալ։

Խխոցը ըսպանող, Վարթուն չոլերը քըցող վեզիրը տեղը պնդըցընըմ ա, ասըմ.— Վեչ մինին ասիքյ վուչ, թա̈ չէ կլխընետ կըտրըլական ըմ։

Վարթին շատ ա քյինո̈ւմ, խրեգյ ա քյինո̈ւմ, եշըմ ա, տըեսնում մին հա̈նդի մին չոբան վեխճար ա ըրըծցնըմ։

Ծեն ա տամ չոբանեն, ասըմ.— Ա՛յ չոբան, ինձ հետե մին ծեռք շո̈ր ճարե, պեր կյենամ։

Էտ չոբանը սա̈սին յրա ճընանչըմ ա, վեր ո̈ւրա̈ն խազայինին ախճիգյն ա։

Մին վեխճար ա մորթում, մորթեն շո̈ր շինում, կյեց տամ, թըփանավըն էլ կլո̈խը ծասկըմ։ Մեսը խրավում ըն, ուտում։ Ախճիգյը չուբանեն ճընանչըմ ա, ըսկըսըմ ա կլխավը անց կացածը նաղլը անելը։ Վըեր մթնըմ ա, քյինա̈մ ըն տուն, չոբանը քյինա̈մ ա խազայինին ասըմ, վըեր ինձ մին հնգեր օնիմ, տղա յա, անումը Քաչալ։ Քաչալը յոր ա օնում պիրըմ տուն։

Խազայինին ասըմ ա.— Դե մեր տոնը էրկու ղոնաղ ա եկալ, կարելի յա՞ ըստեղ քշերս կենան։

Թաքավերին տղան, վեր լոխ գյուղում ա, ըսկսում ա շոռ կյալը։ Կյամ ա ղոնաղ ընգնում էտ տանը։

Վեզիրը կլխու յա ինգյնըմ, վեր Քաչալը Վարթին ա։

Ո̈ւրո̈ւգյունը նստում ըն, թա հաց օտին։

Քաչալը ասըմ ա.— Խազա՛յին, խնթրըմ ըմ ո̈ւրո̈ւգյո̈ւնս էս տանս ղեկավարութունը ինձ տաս։

Խազայինն ասըմ ա.— Հինչ կինի, լա̈վ կինի՛։

Քաչալը ըսկըսըմ ա կլխավը անց կացածը նաղլ անելը։ Համ նաղլ ա անըմ համ մորթեն կյեցան հանում, լոխ ճընանչում ըն,

Վըրնը տա Վարթին ու Մար, հա̈ր, ախճիգ։ խառնվըմ ըն։ Ածատուրն օղըմ ա, թա̈ փախչի, չոքանը թողըմ չի՛, վեզիրին նան Ածատուրին ծիւին հա̈քյվա̈ն ըն տամ, քաշ-քաշ անում, ըսպանում։

Վարթուն թա̈ղա̈ղա̈ն օխտը օր, օխտը քշեր հըրսանիքյ ըն անըմ, էն տղեն նհետ։ Ընդրանք էն վըխտանց մինչև ըսօր թախտավեր ապրըմ ըն։ Ընդրանք հասեն ո̈ւրա̈նց մուրազին, ո̈ունք էլ հըսնինքյ մեր մուրազին։